

ՀԱՅԵՐԵՍ «ԱՆՇՈՒԾ» ԲԵՐԴ՝ ՄՈՌՎՑՈՒԹՅԱՆ ԱՄՐՈՑ (Ստուգաբանական ծանոթագրություն)

ԿԱՅՈՒԴԻԱ. Ա. ԶԻԱՆԿԱԼԻՆԻ (Խոալիա)

Ձուսառ Տրախնայի կատարած վերլուծությունը ցույց է տալիս, որ բարձրաստիճան դատապարտյալների *dāmnatio mortis* տեսօրաց մին վերաբերող ավանդույթը, ինչպես նաև Անհուշ բերդի անունը, հիշատակված չեն իրանական սկզբնաղբյուրներում։ Դա բավական զարմանալի է, որովհետև պահապերն բնագրերը մեզ բավական լավ են իրազեկում սասանյան իրավական համակարգի մասին։ Նույնիսկ Պարսկաստանի նահատակներին վերաբերող ասորական փաստաթղթերը մազդեականության դեմ ուղղված գործողությունների պատճառով պատժամիջոցների մանրամասն, հաճախ դաժան նկարագրություններով, երբեք չեն հիշատակում առանց ցուցումի մահապատճի մասին։ Իմ կարծիքով դա պատահական չէ և կարող է մեկնաբանվել լեզվաբանական կովաններով։

Փոքր կասկածներ կան առ այն, որ Բերդի հայերեն անունը («անհուշ» բերդ իր «անհուշ» ավելի պարզունակ տարբերակով, չուն[արեն]՝ ֆրանքական) կարող է փոխառություն լինել միջին պարսկերենի՝ չհավաստված անունից, բայց հավանաբար հարկ է այն վերափոխել **anōs bard-ih*։ Առանց այս պահին հոդ տանելու հայ-բյուզանդական ավանդույթի կողմից տրամադրված ստուգաբանական բացատրության մասին, հարկ է նախ ճշգրտել միջին պարսկերենի այն բառերը, որոնցից կարող էր սկիզբ առնել տեղանունը։ Հայերեն «բերդ» (*ամրոց*) բառը, թվում է, թե փոխառություն է միջին պարսկերեն **bard-īg*՝ *bard-īg*։ Ինչ վերաբերում է հայերենի «անհուշ» մոդելին, կարելի է տեսականորեն ընտրություն կատարել միջին պարսկերենում նույնանման գրություն ունեցող (ըստ ոմանց նաև համահունչ) երեք բառերի միջև, որոնք, այդուհանգերձ, զանազանվում են կամ ստուգաբանությամբ, կամ իմաստով։

1) ¹ օ՛ օ՛ վաճ՝ «խիղճ, իմացություն, միտք»², մանիքեական միջին պարսկերեն՝ նույնը, պարսկերեն՝ *hos*, ածանցավոր բառեր. միջին պարսկերեն

* Խոսքը հանդեսի սույն համարում (չ. 186–202) տպաղրված հոդվածի մասին է։ Հղումների մի մասը բոտ Զ. Տրախնայի հոդվածի։

** (լատ.) – հիշողության ժմանակ (ծ. թ.)։

1) Միենույն հնդեվրոպական արմատին են կցվում հուն[արեն] ուրցուս, լատ[իներեն] burgus, գոթական burgs, հին վաղ գերմաներեն burg և այլ բառեր. տե՛ս A. W a l d e, J. P o c o r n y. Vergleichendes Wörterbuch der indogermanischen Sprachen. Bd. II. Berlin-Leipzig, 1927, S. 172; H. F r i s k. Griechisches Etymologisches Wörterbuch. Bd. II. Heidelberg, 1972, S. 629.

2) D. M. M a c K e n z i e. A Concise Pahlavi Dictionary. London, 1971; H.S. N y - b e r g. Նշ. աշխ., էջ 146:

օսիհ-օս, միջին պարսկերեն *օսյար* [‘wsd’l]՝ «բարեխիղճ, զղույշ, շրջահայց», պարսկերեն՝ *հօսյար*; պարսկերեն *հօսմանձ* «զգույշ, շրջահայց», մանիքեալիան միջին պարսկերեն *’bywš, ’by’ws /abēyus/* «անխոհեմ» և *’by’wsyh /abēyuսt/* «անխոհեմություն»³, տե՛ս Հայ[երեն]» «ապուշ», պարսկերեն *ba hօs* «խելացի, խոհեմ», *bī hօs* «անխոհեմ, բութ, չկշռադատված, անբանիմաց»⁴:

Այս բառի նախնական իմաստն «ականջ» է, ինչպես տեսնում ենք, Ավեստայում նշված մենամարտում այս «ականջներ»՝, հնդկրոպականի հիմքը՝ ⁴աս- – և է⁶, դրանից սկիզբ են առնում հին սլավոներեն ատ-ին (ուղղ[ական]՝ մեն[ամարտ], եղա[կի]՝ յԽԾ, սեռ[ական]՝ usese), լիտ[վերեն] ausis-ին, լատ[վերեն] ձաստ-ին, լատ[իներեն] auris-ին, հուն[արեն] οὖς, ωτος-ին՝ այն բոլոր բառերը, որոնք ունեն «ականջ», լողություն» հենքային իմաստ: «Ըմբռնումի, իմացության, խղճի» այլաբանական արժեքն արգեն հավաստվել է Ավեստայում նշված ձևով և հնդկրանական լեղփում դա միակ սլահուանված ձևն է, ուր ականջի նախսկին անունը փոխարինված է նոր բառով, այն է՝ Ավեստայում նշված ցաօսա-ով՝, հին պարսկերենի gausa- -ով, միջին սլարսկերենի goš [gws]-ով, որը սկիզբ է առնում հնդկրոպական ⁴ghiesus- -ից՝ «ձայնն անդրադարձնել, աղմուկ տուած բերել, գոչել, ունկնդրել, լուել», արմատ, որին կցվում են նաև հին հնդկերենի ghōsatī՝ «ձայնն անդրադարձնել, արձագանքել» և ghōsa՝ «ձայն, աղմուկ» բառերը: Օ՛ բառը հավաստվել է իբրև փոխառություն հայերենից առ ձևով և «հիշողության, հուշի, իմացության, խելքի» փոխաբերական իմաստով:⁹

2) ²ος [’ws] «մահ»¹⁰. Ավեստայի միջնագարյան թարգմանությանը կից ծանոթագրություններում նշված *hos* և միջին պարսկերենի *ahos* [h̥w̥s] «անմահ», Ավեստայի միջնագարյան թարգմանությանը կից ծանոթագրու-

³ M. Boyce, *A World-List of Manichaean Middle Persian and Parthian*, p. 7.

⁴ F. Steingass. A Comprehensive Persian-English Dictionary. London, 1892, p. 1518, 227.

⁵ Chr. Bartholomae. Altiranisches Wörterbuch. Strassburg, 1904, p. 414.

6 A. W a l d e, J. P o k o r n y, řeř. w ėlu., § 172, H. F r i s k, řeř. w ėlu., § 629:

7 Chr. Bartholomaei 129. m. 50 486

8 *Sle*' A. W a l d e, J. P o k o r n y, *Հայկաբանություն*, Ը 1, էջ 569, H.S. N y b e r g, *Նախահայկաբանություն*, էջ 84, A. E r n o u t, A. M e i l l e t. Dictionnaire étymologique de la langue latine. Histoire des mots. Paris, 1959, auris; H. F r i s k, *օսք*; P. H o g n. Grundriss der neupersischen Etymologie. Strassburg, 1893, S. 943 (*goš*) et S. 1111 (*hōs*); B. C. R a c t o r g u e v a, Д. И. Э д е л ь м а н. Этимологический словарь иранских языков. Т. I. М., 2000, с. 268 *Ցասի: Հնդկելորպական *gheus- արմատին նախնական իմաստը սահմանելը կասկած է պրոբրեմների հետ: Հաստ Ուալդի և Պոկորնիի բառի իմաստային նշանակությունը կարող է հանգել երտու, հոր -ի և երկրպարդ նշանակությունը կարող է նաև հաստատել հին հնդկերենու սակայն խնդրո առարկա վեդայական հատվածները միանցանակ չեն և լազմամթիվ գիտնականներ հանձննու դրանց ընդունել են ավելի շուտ «Հնչել և այլ»», քան «լուսություն» իմաստը. տե՛ս P. D i G i o v i n e. Studio sul perfetto indoeuropeo. V. I. Roma, 1990, p. 46.

9 ζητηριώναν (Η. Η ὑπόσχεται π. ηγ. ωλμ., βθρ 237) ζωγραφίας
νηπικής ή ήρεμης "Gedächtnis. Verstand, Acht", στην οποία Β. Σ. Ραστοργύεβα, Δ. Ι.
Εδελβίμαν, ηγ. ωλμ., τηρ 269:

10 D.M. MacKenzie, Esq., M.P., 1961.

թյուններում նշված առօս բառերի հիման վրա Նիբերզը կարգում է *hos*¹¹. Ժխտական նախածանցով բառը ահօս է կարդացվել նաև Մաք Քենզիի կողմից¹², որը հիշաակում է նաև ահօսի «անմահություն» վերացական բառը: Դասական պարսկերենում գանում ենք *hos* («մահ») բառը¹³: Ածանցափոր բառեր. միջին պարսկերենի ծօժոնդ [‘s’mnd] «մահացու»¹⁴ (Նիբերզը կարդում է *հօժօնդ*)¹⁵. Ժխտական նախածանցով, բացի Ավեստայում նշված *an-aosā-* -ից¹⁶ և միջին պարսկերենի *aհօս*-ից համրնկնում են նաև միջին պարսկերենի *anōs* [‘nōs]-ը՝ բառացիորեն «անմահ», կենսահեղուկ, հակաթույն»¹⁷ և միջին պարսկերենի *anōsag* [‘nōsk’, մանիքեական միջին պարսկերենի ‘*nōsag*’, պարսկերենի *anōša*]-ը՝ «անմահ»¹⁸. *anōs*-ը և *anōsag*-ը միջին պարսկերենի երկու ամենատարածված ձեւերն են՝ մատնանշելու համար անմահություն հասկացությունը և հաճախ դրանք օգտագործվում են իբրև ինքնակալի կամ նրա կառավարության մակդիրներ (տե՛ս *anōsag* *xwadāyīh* «անմահ գերագույն իշխանություն»), կամ իբրև բարդ հատուկ անունների տարրեր, օրինակ՝ *Nosirnān* <*anōsag* (կամ *anōše*) *ruvan*, բառացիորեն «դեպի անմահ հոգի» կամ *Anōsēzad*, բառացիորեն «անմահ ձնված»:

Այս բառը կապված է Ավեստայում նշված *aosāh-*ի հետ¹⁹ և կարող էր սկիզբ առնել հնդեվրոպական *eis- «այրել» արմատից և, այսպիսով, պետք է ունենա հին հնդկերենի *osati*, հուն[արենի] εὗω, լատ[իներենի] uro միկնույն արմատը²⁰: *os* բառը հավաստվել է իբրև փոխառություն հայերենից ու ձեռով «հիշողություն, հուշ, իմացություն, գիտակցություն» փոխաբերական իմաստով²¹: Միջին պարսկերենի տառադարձված «*wś*» ձեւ կարող է կարդացվել կամ իբրև *os*, կամ *hos*, քանզի նախնական գրելաձեւ կարող է ներկայացնել կամ եբրայերենի առաջին տառը (որը կանոնավոր ձեռով նախորդում է ձայնավորով սկսվող բոլոր բառերին), կամ /չ/-ը: Ծշդրիտ ընթերցանության առթիվ կասկածը պայմանավորված է նաև այն փաստով, որ բառին, նրա պատմության ընթացքում, իհարկե հավելվել է /չ/ գլխատառը, ինչպես ցույց են տալիս Ավեստայի միջնա-

11 H.S. N y b e r g. Նշվ. աշխ., էջ 101:

12 D.M. M a c K e n z i e. Նշվ. աշխ., էջ 6:

13 P. H o r n. Նշվ. աշխ., էջ 112:

14 D.M. M a c K e n z i e. Նշվ. աշխ., էջ 62:

15 H.S. N y b e r g. Նշվ. աշխ., էջ 101:

16 C h r . B a r t h o l o m a e. Նշվ. աշխ., էջ 114:

17 D.M. M a c K e n z i e. Նշվ. աշխ., էջ 10:

18 H.S. N y b e r g. Նշվ. աշխ., էջ 19: M. B o y c e. A World-List of Manichaean Middle Persian, p. 13.

19 C h r . B a r t h o l o m a e. Նշվ. աշխ., էջ 43:

20 A. W a l d e, J. P o k o r n y. Նշվ. աշխ., էջ 111, B. C. R a c t o r g u e v a, D. I. Թ ա մ ե լ մ ա ն. Նշվ. աշխ., էջ 266. *2auš; M. M a y r h o f e r. Etymologisches Wörterbuch der Altindoarischen. Heidelberg, 1986, S. 281, H. F r i s k. Նշվ. աշխ., h. 1, էջ 596, εὔω; A. E r n o u t, A. M e i l l e t. Նշվ. աշխ., էջ 755, մրō.

21 Հյուրշմանը (H. H u b s c h m a n n. Նշվ. աշխ., թիվ 237) հայերեն բառը թարգմանում է իբրև “Gedächtnis, Verstand, Acht”; տե՛ս նաև B. C. R a c t o r g u e v a, D. I. Թ ա մ ե լ մ ա ն. Նշվ. աշխ., էջ 269:

դարւան թարգմանությանը կից ծանոթագրություններում նշված ձևերը: Միջին պարսկերենում և պարսկերենում ոչ ստուգաբանական /հ/ գլխատառի հավելումը հայտնի երկույթ է. տես միջին պարսկերենի hast [hst] «ութ» < հնդեվրոպական *ok'tō, Ավեստայում նշված asta և այլն²²:

3) ³os [ws] «արշալույս»²³. կազմված է միջին պարսկերեն os(e)bam [wsb'm] «արշալույս, այգ» բառից²⁴: Նիբերգը կարգում է usbām և հղում Ավեստայի միջնագարյան թարգմանությանը կից ծանոթագրություններում նշված hosbam ու մանիքեական միջին պարսկերենի 'ացնի' բառերը²⁵: Այս բառը, որը չի սլահպանվել նորյ պարսկերենում՝²⁶, ստուգաբանորեն կազմված է Ավեստայում նշված as(āh)- -ին²⁷, սանսկրիտի սահ-ին, հունարենի] էօաշ-ին, ըսա Հոմերոսի արաահայտության՝ հօօշ-ին լատիներենի] ասրօա-ին, լիտ[վերենի] ասթրա-ին և այլն ու սկիզբ է առնում հնդեվրոպական *as-es- -ից²⁸:

Հայ-բյուզանդական ավանդույթը «ստուգաբանական» հիմնավորում է տալիս Անհուշ բերդի անվանը: Այն կարող էր այսպես կոչվել, քանզի դրա բանտարկյալների անունների հիշատակումն արդելված էր: Կարելի է, այսպիսով, կարծել, որ Հայ-բյուզանդական ավանդույթի համար «անհուշ» ձևը հնարավոր է մեկնաբանել իրբե առ- +ս, ժիտական ածականի բաղկացուցիչ մաս, քանի որ վերջինս փոխառված է միջին պարսկերենի 'os [ws]-ից: Իմաստաբանական առումով նկատելի է, որ միջին պարսկերենի (և պարսկերենի) 'os-ն ամփոփում է միայն «իմացություն, գիտակցություն» իմաստաները, որոնք բառի իմաստային նշանակության փոխաբերական առումով՝ ավելի շուտ հեռու են «ականջ, լսողություն» բառերի ստուգաբանական նշանակությունից, որը հնդիրանական լեզուներում հիշատակվել է միայն Ավեստայում նշված գործածությամբ²⁹: Փոխարենը հայերենից ան փոխառությունը, բացի «իմացությունից», միաժամանակ ներկայացնում է նաև «հիշողություն, հուշ» փոխաբերական իմաստները (տես վերը). սրանք բառի իմաստային նշանակություններն են, որոնք, միջին պարսկերենի կողմից վկայված բառերի իմաստային նշանակության հետ ունեցած հարաբերակցությամբ ավելի մոտ են բառի հին իմաստին: Բանզի հայտնի է, որ հայերենից պարսկերենին անցած փոխառությունների մեծամասնությունը թվագրված է Արշակունիների դարաշրջանով և

22 В. И. А б а е в, М. Н. Б о г о л ю б о в, В. С. Р а с т о р ғ у ե ա. Основы иранского языкоznания. Среднеиранские языки. М., 1981, с. 44; C. S a - l e m a n n. Mittelpersisch.– W. Geiger, E. Kuhn (ed.), Grundriss der iranischen Philologie, Strassburg, 1895–1901, S. 272; B.C. R a s t o r ғ u ե ա, Դ.И. Է դ ե լ ь մ ա ն. նշ., էջ 267:

23 D.M. M a c K e n z i e. նշ. աշխ., էջ 62:

24 Նույն անում:

25 M. B o y c e. A World-List of Manichaean Middle Persian and Parthian, p. 18.

26 P. H o g n. նշ. աշխ., էջ 281:

27 C h r. B a r t h o l o m a e. նշ. աշխ., էջ 415:

28 A. W a l d e, J. R o k o r n y. նշ. աշխ., էջ 26, B. C. R a s t o r ғ u ե ա, Դ. Ի. Է դ ե լ ь մ ա ն. նշ. աշխ., էջ 269 և այլն:

29 P. H o g n. նշ. աշխ., էջ 1111, H.S. N y b e r g. նշ. աշխ., էջ 146, B. C. R a s t o r ғ u ե ա, Դ. Ի. Է դ ե լ ь մ ա ն. նշ. աշխ., էջ 269 և այլն:

այսպիսով, ունի հյուսիսարևմտյան ծաղում³⁰, կարելի է ենթադրել, որ միջին պարսկերենի օՏ-ի պարթևերեն համարժեքը կարող էր պահպանել «Հիշողություն, հուշ» փոխարերական նշանակությունը, որն ավելի մոտ է «ականջ, լսողություն» բառացի իմաստին և ավելի հին է միջին պարսկերենի կողմից վկայված նշանակությունից:

Այլուհանդերձ, կան բաղմաթիվ պատճառներ միջին պարսկերենի *առօՏ hard-ն իբրև «մոռացության ամրոց» չթարգմանելու համար, որը մենք առաջարկեցինք իբրև հայերեն «անհուշ բերդի» փոխառության մոդել: Նախ միջին պարսկերենում հնարավոր չէ մեկնաբանել առօՏ-ն իբրև օՏ-ի ժխտական բաղկացուցիչ մասնիկ, որովհետեւ այս վերջին բառը ժխտական ձեռվ կարելի է օգտագործել միայն աԵ- նախածանցի հետ, որը նշանակում է «առանց»³¹. տե՛ս, օրինակ, մանիքեական միջին պարսկերենի աԵցյա՞ «անդիտակից», աԵցյա՞ ի՞՝ «անդիտակցականություն», պարսկերեն ե՛՛ հօՏ՝ «Հիմար», ինչպես նաև հայերեն «ապուշ» բառերը (տե՛ս վերը): Ավելին, առօՏ-ը միջին պարսկերենում հաճախ է հանդիպում, սակայն խոսքը վերաբերում է + օՏ ժխտական նախածանցից բաղկացած մասնիկի: Հետևաբար, մեր կարծիքով, միջին պարսկերենի *առօՏ bard-ը կարող է ունենալ «անմահ, հավերժ բերդ» և ոչ թե «անհուշ բերդ» նշանակությունը, քանի որ վերջին մեկնաբանությունը համաստուգաբանություն է, որը հարկ է վերադրել հայկական ավանդույթին և որը հույն պաամիչները ժառանդել են հայերից:

Ի դես, դիաելով *առօՏ-ն իբրև an- + օՏ և ոչ իբրև an- + օՏ, հայերը հետեւ են անբասիր լեզվաբանական տրամաբանության, որովհետեւ հայերենը, ի շարս նույնանման դրություն ունեցող երեք բառերի, միջին պարսկերենից փոխառել է միայն օՏ ձեռը: Ամեն դեպքում, հայկական ավանդույթը, որն, ամենայն հավանականությամբ, ժողովրդական ծաղում ունի, դերադասում էր հենվել Անհուշ բերդի լեզենդի վրա, որն ինչպես Զուստո Տրահնան է բացահայաել, անմիջապես ալեկոծել է հայկական և բյուղանդական խոհերը մի դարաշրջանում, երբ իրանն արդեն դիտվում էր իբրև «չարիքի կայսրություն»:

Ֆրանսերենից թարգմանեց
ՎԱՐՈՒԺԱՆ ՊՈՂՈՍՅԱՆԸ

30 Տե՛ս ընդհանուր առմամբ G. Bolognesi. Le fonti dialettali degli imprestiti iranici in armeno. Milano, 1960; R. Schmitt. Armenia and Iran. IV. Iranian Influences in Armenian // E. Yarshater (ed.). Encyclopaedia Iranica. V. II. London/New York, 1987.

31 D. M. MacKenzie. Նշ. աշխ., էջ 3, H.S. Nyberg. Նշ. աշխ., էջ 20: